— Օրհնութեան Երևանի Թեմական Խորհրդի անդամների անունով՝ նրանց գործունէութեան համար։ 17 մայիս. թ. 1283։

— Օրհնութեան Տագանրոգ քաղաքացի Սերովբէ և Եղիա Օտաբաշեանց եղբ. անունով՝ տեղական եկեղեցուն և ծխական դպրոցի շինութեան 20000 ռուբ. աւելի նուիրաբերութեան համար։ 23 մայիս. թ. 1320։

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Մայիսի 10-ին Սինոդը, լսելով Ղարաբաղի կոնսիստորիայի յայտարարութիւնը՝ որոշեց. թոյլ տալ Ղարաբաղի կոնսիստորիային ընդունել Նուխու գաւառի Դեօգբուլաղ գիւղի բնակիչ Յովհաննէս Տէր-Մեսրոպեանին հոգևոր կոչման մէջ նոյն գիւղի համար քահանայ ձեռնադրելու և առաջադրել Շամախու թեմի առաջնորդ Տ. Անանիա արքեպիսկոպոսին ձեռնադրել նրան։ № 293։

Մայիսի 12-ին Սինոդը ինկատի ունելով՝ որ Մուխրանեան փողոցում եղած տունը կտակով նուիրած է և չէ կարելի այն օտարացնել, այլ միայն փոխել ուրիշ անշարժ կայքի հետ, ուստի որոշեց լիազօրութիւն տալ Տփխիսի էջմիածնական կալուածների կառավարիչ Եփրեմ վարդապետին բանակցելու Թիֆլիզի քաղաքային վարչութեան հետ՝ յիշեալ կալուածքը Պապկովի տան հետ փոխարինելու մասին, պայմանաւորուելով, որ այդ տան ճակատները բաց հրապարակի վրայ լինին։ № 301։

—12-ին Սինոդը որոշեց. հաստատել էջմիածնական Մեհրապ—Քիւրդ—Քեանդ և Թափարաշ գիւղերը կապալով տալու համար կապած պայմանը նոյն գիւղերի հաւատարմատարների անունով հինգ տարի ժամանակով տարեկան 714 ռուբլիով։ № 303։

—17-ին Սինոդը որոշեց. պատուիրել Մայր Աթոռի գանձապահին տալ Ճեմարանի վարչութեան բժ. Տիդրա-

նեանի յատուկ գումարի առ 1-ն սոյն մայիսի գանձուած տոկոսները՝ ութ հարիւր յիսուն ութ ռուբլի 53 կոպ։ № 318։

—19-ին Սինոդը ազդիս Վեհափառ Հայրապետի ապրիլ 14-ի № 939 կոնդակի համեմատ որոշեց. ուղարկել Մ. Աթոռի բոլոր հաստատութիւններին և թեմերի կոնսիստորիաներին 1910 թուի համար կազմած տպագրուած նախահաշիւներից, պատուիրելով անշեղ հետևել այդ նահանգաշրջանին, իսկ արտակարգ ծախքերի դէպքում խնդրել Սինոդի թոյլտուութիւնը։ № 320։

—21-ին Սինոդը Երևանի կոնսիստորիայի մարտի 30-ի № 3298 յայտարարութիւնը լսելով որոշեց. թոյլ տալ Երևանի կոնսիստորիային ընդունել Իգդիր աւանի բնակիչ Կարապետ Ուշտունուն հոգևոր կոչման մէջ Իգդիր աւանի համար քահանայ ձեռնադրուելու և ձեռնադրելու համար տալ հրաման Տ. Մեսրոպ արքեպիսկ. Սմբատեանին։ № 324։

—21-ին Սինոդը Վեհ. Հայրապետի՝ մայիսի 13-ի № 1257 կոնդակի համեմատ որոշեց. արձակուած համարել Մկրտիչ սարկաւագ Մուրադեանին Մ. Աթոռի միաբանակցութիւնից և խոպառ զրկուած հոգևոր կոչումից ու աստիճաններից, որի մասին տեղեկութիւն տալ իրան Երևանի կոնսիստորիայի միջոցով։ № 326։

—21-ին Սինոդը լսելով Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանի նոյն մայիսի 11-ի յայտարարութիւնը հանգուցեալ Խորէն եպիսկոպոս Ստեփանէի թողած կայքի և դրամների մասին՝ որոշեց. ուղարկելով Սիմֆերոպոլ քաղաքի փաստաբան Զաքիեանցին Մարտիրոս Զայցևի սատրագրութիւնը՝ յանձնարարել նրան դատարանով պահանջել վերջնից 1200 ռուբլի։ № 329։

—21-ին Սինոդը լսելով Տփխիսի էջմիածնապատկան կալուածների կառավարիչ Եփրեմ վարդապետի նոյն մայիսի 7-ի № 72 յայտարարութիւնը Կրծանիսի էջմիած-

նապատական այգու յետ գնելու մասին, որոշեց. օրինական լիազօրութիւն տալ Տ. Եփրեմ վարդապետին Կրծանիսի աթոռապատկան 1020 քառ. սաժ. այգին յետ գնելու և կալուածագիր հաստատելու համար։ № 331։

—21-ին Սինոդը լսելով ազգիս Վեհափառ Հայրապետի կոնդակը № 1238, Մայր Աթոռի բոլոր կալուածների յատակագծերի մասին, որոշեց. ուղարկել Երևանի Փոխ—Թեմակալին Սինոդիս գործերուն եղած և գանձարանում պահուող բոլոր կալուածների յատակագծերը և պատուիրել պատճէններ հանել տալ նրանցից և իսկականների հետ վերադարձնել Սինոդիս։ № 332։

—24-ին Սինոդը լսելով Վաղարշապատում կառուցանուելիք նոր սպանդանոցի գործը, որոշեց. յատկացնել «զորու» առուի մօտ 625 քառ. սաժ. տեղ նոր սպանդանոցի համար, այդ հողամասի շահեկանութեան վկայական տալով Վաղարշապատի Հայոց Ս. Աստուածածին եկեղեցու անունով այն պայմանով, որ սպանդանոցի եկամուտը այսուհետև ևս միշտ գործադրուի Վաղարշապատի հայոց եկեղեցական ծխական դպրոցների պահպանութեան համար։ № 333։

—24-ին Սինոդը լսելով Բելց քաղաքում կառուցանելիք եկեղեցու գործը, որոշեց. ուղարկելով Բեսարաբիոյ նահանգապետի հաստատած յատակագիծը և յայտնելով, որ եկեղեցու շինութեան համար պատրաստ դրամ կայ արդէն, ներքին Գործոց Նախարարութեան ձեռքով Նորին Կայսերական Մեծութեան Բարձրագոյն հաճութիւնը խնդրել Բելց քաղաքում հայկական եկեղեցի կառուցանելու համար։ № 335։

—24-ին Սինոդը լսելով Աստրախանի կոնսիստորիայի մայիսի 7-ի № 1799 յայտարարութիւնը որոշեց. թոյլ տալ Աստրախան քաղաքի ծխականներին ծախսել Ս. Աստուածածին եկեղեցու դրամագլխից նոյն եկեղեցու վերանորոգութեան համար այլ ևս 7500 ռ. ներկայացրած նախահաշուի համաձայն։ № 336։

—26-ին Սինոդը լսելով Երևանի կոնսիստորիայի նոյն մայիսի 17-ի № 3500 յայտարարութիւնը, որոշեց. թոյլ տալ Երևանի կոնսիստորիային ընդունել Կարապետ Տէր-Գրիգորեանցին հոգևոր կոչման մէջ Ալէքսանդրապոլի գաւառի Ղայդալի—Դուզքեանդ գիւղի համար քահանայ ձեռնադրելու, իսկ ձեռնադրութեան համար հրաման տալ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանին։ 339։

—28-ին Սինոդը լսելով առանձին յանձնարարութեանց պաշտօնեայ Ն. Հայրապետեանի Մայիսի 16-ի № 16 յայտարարութիւնը Օշականում էջմիածնապատկան հողերի ապօրինի յափշտակութեան մասին, որոշեց՝ ուղարկելով Սինոդիս փաստաբանին յիշեալ յայտարարութիւնը պատուիրել նրան դատարանի միջոցով Մայր—Աթոռին պատկանող հողաբաժինները հանել ցուցակում՝ յիշեալ գիւղացիների ապօրինի տիրապետութիւնից։ № 341։

Նոյն օրը Սինոդը լսելով Ղօշամանքի «Ցայլաբ» կոչուած 615 դեսեատին վարելահողը կապալով տալու մասին զեկուցումը, որոշեց. «Ցայլաբ» կալուածքի նախկին վարձակալ Գէորգ Ղարիբեանին իւր տուած տոմարագրութեան համաձայն իսպառ հրաժարուած ճանաչելով յիշեալ կալուածքի կապալառութիւնից, տալ վարձու Ցայլաբի 615 դեսեատին վարելահողերը Երևան քաղաքում բնակուող Մկրտիչ Կարապետեանցին 12 տարի ժամանակով, սկսած սոյն տարուայ ապրիլի 1-ից մինչև 1922 թուի ապրիլի 1-ը տարեկան 1700 ռուբլով, Դաշն կռել Մկրտիչ Կարապետեանցի հետ համեմատ դաշնագրի նախագծի, որ մշակուած է Սինոդիս և վարձակալի փոխադարձ համաձայնութեամբ և ստորագրութեամբ։ № 343։

Նոյն օրը Սինոդը, լսելով Դուշէթ քաղաքի բնակիչ Աղէքսանդր Զալինեանցի կտակի մասին զեկուցումը, որոշեց. առաջադրել Վաղարշապատի Հայոց կոնսիստորիային Դուշէթի գործակալի ձեռքով յորդորել Աղէքսանդր Զալինեանցի կտակակատարներին, որ կտակած դուժարի տոկոսները գործադրելիս աչքի առաջ ունենան կտակարարի կամքը

Ս. Էջմիածնի ճեմարանում ևս օրդեգիր պահելու վերաբերությամբ։ № 345։

—31-ին Սինոդը, լսելով Եղիշէ Ծ. վարդապետ Մուրադեանի գործի մասին զեկուցումը, նրա գործողությունները, թէ վանահայրական պաշտօնում և թէ այնուհետև, գտնելով անհամապատասխան հոգևոր կոչմանը, նրա խուսափումն հոգևոր իշխանության առաջադրությունները կատարելուց համարելով անհանդուրժելի և ի նկատի ունենալով նրա վերջին (1910 թ. փետրուարի) յայտարարությունը, որով խնդրում էր իրան ազատ կացուցանել հոգևոր կոչումից, եթէ Սինոդս հնարաւոր չգտնէ կատարել իւր պահանջները, իսկ այդ պահանջները կատարել անհնարին էր,—որոշեց իսպառ ազատ համարել նրան հոգևոր կոչումից և Մ. Աթոռի միաբանության անդամակցությունից, տեղեկություն տալով այս վճռի մասին Տփխիսի նահանգապետին և իրան՝ Եղիշէ Ծ. վարդապետին նոր—Նախիջևանի և Բեսարաբիայի կոնսիստորիայի միջոցաւ։ Բացի սրանից, աչքի առաջ ունենալով, որ Եղիշէ Ծ. վարդապետի վանահայրությունն օրով Ղրիմի Ս. Խաչ վանքը պարտ է մնացել զանազան անձանց, որոնց ստանալիքների հաշիւները ստուգապէս պարզուած չեն կատարուած քննությամբ, այս գործը յանձնել Սինոդիս Հաշուարարական մասը վանքի դրամական հաշիւները պարզելու և նոր զեկուցումն անելու՝ վանքի արդիւնքից յիշեալ պարտքերը վճարելու համար։ № 355։

Յունիս 2-ին Սինոդը, լսելով Վեհափառ Կաթուղիկոսի այս տարուայ Ապրիլի 3-ի № 784 կոնդակը, որոշեց, որովհետև Խոսրով վարդապետը Մուղնու Ս. Գէորգայ վանքի վանահօր պաշտօնից արձակուած և Սինոդիս օրագրական վճռով Խծկոնից վանքի միաբան է կարգուած՝ Յովէլ վարդապետին նոյն կոնդակի համաձայն նշանակել Մուղնու Ս. Գէորգայ վանքի վանահօր և Ապարանայ գործակալի պաշտօնակատար և խնդրել Երևանի նահանգապետի համաձայնությունը նրան վանահայր և գործակալ

կարգելու համար։ Այս վճռի մասին տեղեկութիւն տալ Երևանի կոնսիստորիային, որի միջոցով պատուիրել Խոսրով վարդապետին կանոնաւոր յանձնողական—ստացողական ցուցակով Ս. Գէորգայ վանքի գոյքը և գործակալութեան հաշիւները յանձնել Յովէլ վարդապետին։ № 356։

Նոյն օրը Սինոդը՝ լսելով Երևանի Փոխ-Թեմակալի յայտարարութիւնը իր այցելած վանքերի տնտեսական դրութեան մասին, որոշեց. համաձայն Երևանի Փոխ-Թեմակալի եղրակացութեան, թոյլ տալ նրան՝ հոգաբարձական մարմիններ հաստատել Կարմիր և Խոր-Վիրապ վանքերի տնտեսական կառավարութեան համար նոյն վանքերի վանահայրերի նախագահութեամբ, տալ նրանց ելից և մտից ժապաւիններ մատեաններ, պատուիրելով տնտեսական կառավարութեան մասին մանրամասն տեղեկութիւն տալ Սինոդին։ № 357.